

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Առաջնորդաւան Հայոց

Թեմին Աստվածականի

Թափեթիք

№ 519

Դեկտ. « 2 » 1946 թ.

« էջմիածին » ամսագրի ապրիլ-մայիս համարում կարդացինք Հետևյալը. « Արդ ի՞նչ ապես կը լա, որ թալիքի Ս. Աստուածածնա պատկանող ձեռագիր մը որ կերևա իր արծաթ կազմով մասնավոր հարգանք պիտի վայելեր, 1906—1924-ի միջև ատեն մը հեղեցին կուղավի, Կտոր-կտոր կը լա և էշ-էշ Փարիզին մինչև Ամերիկա կծախվի. Բուն ձեռագիրը իր ամբողջությամբ, նաև արծաթի կազմը, որ կարևոր կազմ մըն էր, այժմ բոլորովին աներևութիւննա»:

Առաջնորդարանը անմիջապես պահանջեց Ս. Աստուածածին եկեղեցվո ծխատեր Տեր Սահակ քահանան, կարդաց գրվածը և իմացավ, որ Ավետարանը եկեղեցումն է, Անմիջապես քահանան բերավ Ավետարանը, յերթեցինք ու գտանք Հետևյալը. Ավետարանը արծաթապատ է, երեք արծաթյաշարժուն խաչերով. բաց արինք մագաղաթյան երթերը և կարդացինք «Թորոսի» ութ մեծ երեսների վրա գրված շորս ավետարանիշ-ների համարաբառը ծաղկանկարներով գեղեցիկ զարդարած, իսկ առաջին երեսում

Ծխատեր ՍԱՀԱԿ ՔԻՆ. ԵՎԼԿՅԱՆ (ստորագրություն)

Առաջնորդական փոխանորդ ԿԱՐԱՊԵՏ պատ ՔԻՆ. ՄԱՆՈՒԿՅԱՆ (ստորագրություն):

« էջմիածին » ամսագրի
խմբագրության

այլ ձեռքով գրած « Յափ արեղայի » գրությունը ՊՂԷ Հայոց թվականին:

Ապա թերթելով ամբողջ Ավետարանը վերջում կարդացինք Ավետարանը գրով, նույն տառերով, նույն շափերով, ինչ ոչ ամբողջ Ավետարանն էր գրված, Ստեփաննոս քահանայի ձեռքով, իր և ծնողաց Հիշատակին Հայոց թուականին օթամի հարիւրից եմեանց, և տասանց վեցից, տարբերութեան հայոց տոմարիս..... թվ. ԶԿԷ... յամս աստուածապատի Տեառն Կոստանդին Հայոց կտողիկոսի»:

Թերթերի համարակալությունից երեաց, որ սկակաս են յուրաքանչյուր ավետարանչի մասի առաջին երեսին կցած մի մի թերթի հնչպես են անհայտացել այդ շորս թերթերը, դժվար էր ստուգել, քանի որ 1905—1924 մվականի երեք քահանաները մեռած էին և այսօրվա ծխատերը հինգ տարվա քահանա է:

Կիսնդրութի, որպեսսկի այս գրությունը արտատպի «Պայքար»-ի խմբագրությունը, ի պատասխան Հ. Քյուրտյանի հոգվածի:

Խմբագրությունս տպագրելով սույն նամակը՝ ուրախ է արծանագրելու, որ « էջմիածին » ամսագրի 1946 թ. ապրիլ-մայիս համարում զետեղված նյութերը, հայ մշակութի թանգարժեք գանձերի նկատմամբ գոյություն ունեցող անհոգատար վերաբերմունքի ու շարաշահութեան մասին, արծագանք են գտել գաղութահայ շրջաններում. Միաժամանակ խմբագրությունս ճիշտ չի համարում այն դրույթը, երբ ամեն դեպքում, ինչպես և այսուղեղ, փորձեր են արվում հան-

ցանքը միշտ բարեկ մեռածների վրա. Թրված շորս թերթերի կորուսը վկայում է այն մասին, որ բացակայել է ամենօրյա Հըսկողությունն ու հոգատար վերաբերմունքը մեր մշակութի հնադարյան արժեքների նկատմամբ: Խմբագրությունս հուսով է, որ այսուհետև կրազմապատկվի հոգատարությունն ու հսկողությունը հայ ժողովրդի մշակութի անփոխարինելի զանձերի նրկատմամբ: